	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10RB/11CB LI 72-01-01	Էջ 1/3
	Բանկային հաշվի բացման նապատակով հաճախորդ բացելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	Խմբագրություն 2	

Հաստատվել է՝

Տնօրինության 08/07/10թ. թիվ 60/02/10

որոշում

Տնօրինության նախագահ - Գլխավոր

տնօրենի ժ/պ՝

Վ. Սեկոյան _____

1. Ֆիզիկական անձանց համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Անձը հաստատող փաստաթուղթ

Ռեզիդենտ հաճախորդների համար՝ սոցիալական քարտ, իսկ դրա բացակայության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան տեղեկանք

2. Ռեզիդենտ իրավաբանական անձանց համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ*

2.1 Կազմակերպության կանոնադրություն

2.2 Պետական գրանցման վկայական

2.3 ՀՎՀՀ-ն հաստատող փաստաթուղթ

2.4 Հաշվով գործարք կատարելու իրավունք ունեցող ներկայացուցչի (ներկայացուցիչների) տվյալ պաշտոնում նշանակման հրամանը (հրամանները) կամ որոշումը /որոշումները/: Նշված փաստաթղթերը չեն պահանջվում այն դեպքում, երբ ներկայացուցչի պաշտոնը վավերացված է պետ. ռեզիստրի վկայականի ներդիրով կամ կազմակերպության կանոնադրությամբ

2.5 Հաշվով գործարք կատարելու իրավունք ունեցող ներկայացուցչի (ներկայացուցիչների) անձնագիր

2.6 Տեղեկություններ բաժնետերերի, մասնակիցների մասին /Եթե բացակայում է կանոնադրությունում/

2.7 Կազմակերպության կնիքի արտատիպը

2.8 Այլ լրացուցիչ փաստաթղթեր, այդ թվում՝ 10% և ավել բաժնեմաս ունեցող բաժնետերերի անձնագրերի պատճեններ՝ ֆիզ. անձ լինելու դեպքում: Իրավաբանական անձ լինելու դեպքում՝ կանոնադրություն, ՀՎՀՀ, պետ. ռեզիստրի գրանցման վկայական

* Բանկ են ներկայացվում բոլոր փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը պատճենահանվում են Բանկի աշխատողի կողմից: Կնիքը արտատպվում է հաճախորդի մենեջերի ներկայությամբ:


3. Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ*

3.1 Կազմակերպության կանոնադրություն

3.2 Տվյալ երկրի գրանցող պետական մարմնի կողմից տրված վկայական

3.3 Գրանցման վկայական, եթե տարբեր է 3.2 կետով սահմանված վկայականից

3.4 Գրանցողի կամ հիմնադիրների որոշում՝ տնօրենի նշանակման մասին

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10RB/11CB LI 72-01-01	Էջ 2/3
	Բանկային հաշվի բացման նապատակով հաճախորդ բացելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	Խմբագրություն 2	

- 3.5 Բաժնետերերի վերաբերյալ ռեեստրից քաղվածք և տեղեկանք ներառյալ կանոնադրության վերջին փոփոխության և տնօրենի գրանցման մասին,
- 3.6 Կազմակերպության կնիքի արտատիպը, բացառությամբ այն դեպքում, երբ այն պետության օրենսդրությամբ, որտեղ հիմնադրվել է տվյալ իրավաբանական անձը, կնիքի առկայության պարտադիր պահանջ չի նախատեսվում, որի վերաբերյալ հաճախորդի կողմից Բանկին ներկայացվում է համապատասխան հիմնավորում և լրացվում է կնիքի բացակայության մասին Հայտարարություն-Պարտավորագիր (11CB FO 72-01-11):
- 3.7 Ցանկացած այլ որոշում, որտեղ արտացոլված է ընկերության կառուցվածքը և / կամ սեփականությունը, եթե առկա է
- 3.8 Գրանցող գործակալի կողմից թողարկված վկայագիր՝ տնօրենների և բաժնետերերի մասին կամ Բարեկեցության վկայական, որտեղ նշված են Տնօրենների /Քարտուղարների/ Բաժնետերերի մասին տեղեկություններ, ապոստիլով
- 3.9 Հաճախորդի համապատասխան ղեկավար մարմնի որոշումը/լիազորագիրը՝ Հաճախորդի համապատասխան պաշտոնատար անձանց կամ այլ ներկայացուցիչներին (այսուհետ՝ ներկայացուցիչներ) Հաշվով գործարքներ կատարելու իրավունք տալու մասին: Նշված որոշումը չի պահանջվում, եթե Հաշվով գործարքներ կատարելու է դրա համար Հաճախորդի հիմնադիր փաստաթղթով լիազորված ղեկավար անձը
- 3.10 Հաշվով գործարք կատարելու իրավունք ունեցող ներկայացուցչի (ներկայացուցիչների) անձնագրի պատճենը/երը/:
- 3.11 Այլ լրացուցիչ փաստաթղթեր, այդ թվում՝ 10% և ավել բաժնեմաս ունեցող բաժնետերերի անձնագրերի պատճեններ՝ ֆիզ. անձ լինելու դեպքում: Իրավաբանական անձ լինելու դեպքում՝ կանոնադրություն (եթե առկա է), պետ. ռեգիստրի գրանցման վկայական:

*Ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն ապոստիլիզացված (բացառությամբ ԱՊՀ երկրներում գրանցված կազմակերպությունների), թարգմանությունները՝ նոտարական գրասենյակի կողմից վավերացված: Թարգմանություն չի պահանջվում, եթե ներկայացված փաստաթղթերը ռուսերեն կամ անգլերեն լեզվով են:

Կնիքը արտատպվում է հաճախորդի մենեջերի ներկայությամբ:

4. Անհատ Չեռնարկատերերի համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ*


- 4.1 Պետական գրանցման վկայական
- 4.2 Անձը հաստատող փաստաթուղթ
- 4.3 Սոցիալական քարտ, իսկ դրա բացակայության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան տեղեկանք
- 4.4 Առկայության դեպքում՝ կնիքի արտատիպ

* Բանկ են ներկայացվում բոլոր փաստաթղթերի բնօրինակները, բացառությամբ կնիքի արտատիպի:

Փաստաթղթերը պատճենահանվում են Բանկի բանկի աշխատակցի կողմից:

5. Ժամանակավոր հաշիվ բացելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ*

- 5.1 Պետական լիազորված մարմինների կողմից տրված անվանման մասին որոշում
- 5.2 Հիմնադրի անձը հաստատող փաստաթուղթ

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10RB/11CB LI 72-01-01	Էջ 3/3
	Բանկային հաշվի բացման նապատակով հաճախորդ բացելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ	Խմբագրություն 2	

* Բանկ են ներկայացվում բոլոր փաստաթղթերի բնօրինակները:
 Փաստաթղթերը պատճենահանվում են Բանկի բանկի աշխատակցի կողմից:

6. Անվճարունակության հաշիվներ բացելիս անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

6.1 Դատարանի վճիռ կազմակերպության անվճարունակության ճանաչելու մասին,

6.2 Դատարանի որոշում «Կառավարիչ նշանակելու մասին»